«ՀՄՈՒՏ ՁԵՌՔԵՐ» ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

Շաբաթական 2 ժամ

Տարեկան 68 ժամ

Ակնկալվող արդյունքներ

Տարեվերջին սովորողը կիմանա `

ա) Ձեռքով և մեքենայով կարի ժամանակ անվտանգ գործունեության կանոնները

բ) Խաղաալիքների և դիդակտիկ նյութերի պատրաստման տեխնոլոգիան

գ) Կտորներից պատրաստվող դետալների և դրանցից կարվող պարագաների պատրաստման տեխնոլոգիան

դ) Տեղեկություններ հայկական ավանդական տարազների և ծիսական տիկնիկների մասին:

Տարեվերջին սովորողը կկարողանա`

ա) Կատարել ձեռքով և մեքենայով կար

բ) Գործվածքի մանր կտորներից պատրաստել դետալներ, դրանցից կարել ինտերիերի տարբեր դետալներ կամ ձևավորել դրանք

գ) Պատրաստել խաղալիքներ, դիդակտիկ պարագաներ տարբեր նյութերից

դ) Պատրաստել ծիսական տիկնիկներ,կարել տարազի դետալներ այդ տիկնիկների համար:

Խմբակի գործունեությունը ուղղված է սովորողների մոտ աշխատանքնային հմտությունների և գեղագիտական դաստիարակության ձևավորմանը:

Ծրագիրը նախատեսված է մեկ տարվա համար, շաբաթական 2 դասաժամով։ Խմբակում նախատեսվում է ընդգրկել 10 տարեկանից բարձր սովորողներին։

Ծրագրի արդիականությունը՝

Ձեռագործությունը դրական է անդրադառնում երեխայի զարգացման վրա,նպաստում է ձեռքի մանր մոտորիկայի զարգացմանը, և՛ ձեռքերի և՛ աչքերի շարժումների կոորդինացմանը։ Բացի այդ, ծրագիրը հնարավորություն կընձեռի սովորողներին ունենալ տարրական գիտելիքներ և հմտություններ կար ու ձևի ոլորտում։ Ինչպես նաև կիրառել դրանք տարբեր միջոցառումների ժամանակ։ Օրինակ՝ կարել գոգնոցներ, գլխարկներ, գոտիներ, թաշկինակներ, պատրաստել տիկնիկներ:

Ծրագրի նպատակը՝

Ծրագիրը միտում ունի երեխաների մոտ առաջացնել ստեղծագործելու մոտիվացիա, զարգացնել ճաշակ, նպաստել անձնային աճին, զարգացնել տարրական աշխատանքային հմտություններ, որը կարող է հիմք հանդիսանալ նրանց մասնագիտական կողմնորոշման համար:

«ՀՄՈՒՏ ՁԵՌՔԵՐ» ԽՄԲԱԿԻ

ԾՐԱԳԻՐ

Ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով: Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը
2. Նպատակները
3. Խնդիրները
4. Վերջնարդյունքները
5. Բովանդակությունը

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա:

«ՀՄՈՒՏ ՁԵՌՔԵՐ» ԽՄԲԱԿԻ
ԾՐԱԳԻՐ
(շաբաթական՝ 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ)

5-6-րդ դասարան

Ներածություն (5 ժամ)
1. Ծանոթություն անվտանգության կանոններին՝ ձեռքի կարի ժամանակ: (1 ժամ)
2. Վերհիշել ձեռքի կարի տեսակները: (1 ժամ)
3. Վերհիշել մեքենայով կարի տեսակները: (1 ժամ)
4. Ինքնուրույն աշխատանք: (2 ժամ)

Հագուստի մոդելավորում (10 ժամ)
Նպատակը
Ծանոթացնել հագուստի մոդելավորման պատմությանը: Տարբեր ոճերի հագուստների մոդելավորում:
Խնդիրներ
Կիմանա հագուստի մասին, կտարբերի ոճերը և կստեղծի սեփական հագուստները:
Վերջնարդյունքներ
• Կիմանա նորաձևության ոճերն ու ուղղությունները: • Մոդելավորման գործընթացը: • Կնկարեն և կստեղծեն սեփական հագուստների կալեկցիան:

Բովանդակություն
1. Հայկական տարազ: (3ժամ) 2. Ստեղծել տարբեր ոճի հագուստներ:(3 ժամ) 3. Ծանոթանալ այլ երկրների հագուստների հետ և ստեղծել սեփականը: (4 ժամ)

Հագուստի պատրաստման տեխնոլոգիա
«Գոգնոց կարել»- 5 ժամ
Նպատակը
Ուսուցանել կարվածքի տեսակները, սովորել աշխատել կարի մեքենայով և կարել պարզ ձևվածքով գոգնոց:
Խնդիրներ
Ձևավորել կարի մեքենայով աշխատելու հմտությունները:
Վերջնարդյունքներ
• Կիմանա կարատեսակները և գծագրի կառուցման քայլաշարը: • Կկարողանա կարել կարի մեքենայով:
Բովանդակություն
1. Կարի մեքենայով աշխատելու կանոնները, առանձնահատկությունները: (1 ժամ) 2. Գոգնոցի գծագրի կառուցում:(1 ժամ) 3. Գոգնոց ձևելու հաջորդականությունը:(1ժամ) 4. Գոգնոցի մոդելավորում:(1 ժամ) 5. Գոգնոցի կարում:(1 ժամ)

Խաղալիքների աշխարհում-8 ժամ
1. Ինչպես պատրաստել կտորե խաղալիքներ:(1 ժամ)
2. Պատրաստել խաղալիքների գծագրեր: (1 ժամ)
3. Տարբեր խաղալիքների ձևում և կարում: (2 ժամ)
4. Պատրաստած խաղալիքների տարբեր դետալներով ձևավորում: (2 ժամ)
5. Ամանորյա խաղալիքների պատրաստում և ձևավորում:(2 ժամ)

Հագուստի պատրաստման տեխնոլոգիա
«Սրբիչ, բռնիչ կարել»-5 ժամ
Նպատակը
ՈՒսուցանել սրբիչի, բռնիչի պատրաստման տեխնոլոգիական հմտությունները:
Խնդիրներ
Ծանոթացնել սրբիչի և բռնիչի պատրաստման եղանակների տարբերություններին և տեխնիկային:
Վերջնարդյունքներ
• Կիմանա սրբիչ և բռնիչ կարել: • Կկարողանա կարել կարի մեքենայով: • Կկարողանա կարվածքներն իրար միացնել:
Բովանդակություն
1. Սրբիչի ձևում և կարում:(1 ժամ) 2. Բռնիչի ձևում և կարում:(1 ժամ) 3. Տարբեր տեսքի բռնիչների կարում:(1 ժամ)

4. Խոհանոցային բռնիչների և գոգնոցների կարում և ձևավորում կտորե դետալներով:(2 ժամ)
Աշխատանք գործվածքի մանր կտորներով»- 5 ժամ
1. Ծանոթություն գործվածքի տեսակներին :(1 ժամ)
2. Գործվածքի մանր կտորներից դետալների պատրաստում:(1 ժամ)
3. Ինտերիերի բարձերի կարում և ձևավորում կտորե դետալներով: (1 ժամ)
4. Սփռոցների կարում և ձևավորում կտորե դետալներով, ժանյակով: (2 ժամ)
Հագուստի պատրաստման տեխնոլոգիա
«Պայուսակ»- 5 ժամ
Նպատակը
Սովորել նախագծել և մոդելավորել պայուսակներ:
Խնդիրներ
Ծանոթանալ պայուսակների նախագծման և մոդելավորման գործառույթներին, տեխնիկային:
Վերջնարդյունքներ
Կկարողանա գծել պայուսակի գծագրեր, ձևել և կարել կարի մեքենայով:
Բովանդակություն
1. Պայուսակի ձևում:(1 ժամ) 2. Պայուսակի կարում:(2 ժամ) 3. Պայուսակի վրա նկարել:(2 ժամ)

Հագուստի պատրաստման տեխնոլոգիա
«Մազակալ (մի քանի տեսակներ)»- 5 ժամ
Նպատակը
Սովորեցնել նախագծել և ձևավորել մազակալներ:
Խնդիրներ
Ծանոթացնել երեխաներին մազակալների ձևավորման և նախագծման աշխատանքներին և տեխնիկային:
Վերջնարդյունքներ
Կկարողանա կարել և ձևավորել մազակալներ:
Բովանդակություն
1. Մազակալի ձևում մի քանի օրինակով:(1 ժամ) 2. Մազակալի կարում:(2 ժամ)
3. Մազակալի ձևավորում:(2 ժամ)
Նյութերի գեղարվեստական մշակում
Կարպետ (Գոբելեն)- 10 ժամ
Նպատակը
Սովորեցնել կարպետի տեսակները և տեխնոլոգիաները:
Խնդիրներ

Ծանոթացնել կարպետ գործելու տեխնիկային և կարպետագործության տեխնիկաներին:
Վերջնարդյունքներ
• Կիմանա կարպետագործության տեսակները: • Կկարողանա գործել զարդանախշեր:
Բովանդակություն
1. Կարպետի պատմությունից:(1 ժամ) 2. Կարպետի տեսակները:(1 ժամ) 3. Կարպետի նախշերի ընտրություն:(1 ժամ) 4. Կարպետ հինել:(2 ժամ) 5. Հենքաթելի ամրացում:Հավասարեցնող շղթայի հյուսում:(1 ժամ) 6. Կարպետի հյուսումն ըստ էսքիզի:(2 ժամ) 7. Կարպետը գործել պարզ նմուշով:(2 ժամ)

Տիկնիկների պատրաստում- 10 ժամ
1. Ինչպես պատրաստել տիկնիկ տարբեր նյութերից (ֆետր, ստվարաթուղթ, արհեստական բամբակ, մանրաթելեր, կտոր):(3 ժամ)
2. Կարել հագուստ տիկնիկների համար՝ օգտագործելով հայկական տարազի դետալներ: (3 ժամ)
3. Կարել ծիսական տիկնիկներ: (4 ժամ)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

1. https://sedavirabyan.wordpress.com/2017/12/16/%D5%A3%D5%B8%D5%A2%D5%A5%D5%AC%D5%A5%D5%B6-%D5%AF%D5%A1%D6%80%D5%BA%D5%A5%D5%BF/
2. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%B8%D5%A2%D5%A5%D5%AC%D5%A5%D5%B6
3. https://m.facebook.com/109348838262653/videos/615803729963029/?__so__=permalink
4. https://www.course.am/hy/courses/fashion-campus/hagusti-modelavorowm-ev-dizayn/EJIBTJZ/
5. https://www.youtube.com/watch?v=gN82X16Y7xM&ab_channel=MarineMkrtchyan
6. https://www.youtube.com/watch?v=7iLNb9AZmHU&ab_channel=NEWSAM
7. https://www.youtube.com/watch?v=M6Jiko-zWWc&ab_channel=ZHESTPsychologicalCenter%D4%BA%D4%B5%D5%8D%D5%8F%D5%80%D5%B8%D5%A3%D5%A5%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D4%BF%D5%A5%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D5%B6
8. https://www.youtube.com/watch?v=j8H2bWKpo6Y&ab_channel=KhanAcademyArmenia